

«Լոյսի Նկարիչը» Ռուտով Խաչատրեան

«Էրեբունի» Հրատարակչությունը, անկի քան 15-ամեայ իր գործունեության ընթացքում, կազմակերպել է բազմաթիվ գեղանկարչական ցուցահանդես-վաճառք-ներ:

Հրատարակչությունը, գործունեության իր այս բնագավառում, բացառաբար ներկայացրել է հայրենաքնակ արուեստագետների աշխատանքները: Առաջին ցուցահանդես-վաճառքը կազմակերպվել է 1974 թ., Պեքորոս Gallery Modu-ար-ում, 12 հայրենի նկարիչների մասնակցությամբ, որոնք եւ յաջորդել են Մարտչե-լում, Փարիզում, Լոնդոնում, Մոնթրեալում, Քորնթոյում, Տիբորյում, Լոս Անջե-լեսում, Նիւ-Եորքում, Ուաշինգթոնում, Հելսինքիում կազմակերպված բազմաթիւ այլ ցուցահանդեսներ: Այս ներկայացումը գործունեության ընթացքում, հրատարակ-չությունը աշխատել է ներկայացնել հայրենի նկարչական արուեստի նուաճումները, ոչ միայն հայկական, այլև՝ օտար շրջանակներում:

Ռուտով Խաչատրեանի ներկայ անհատական ցուցահանդեսը, ոչ միայն իր առաջինն է ԱՄՆ-ում, այլ եւ Խորհրդային Միության նկարիչների բազմազգ ու բազմաթիւ ներկայացուցիչների:

Հոկտեմբեր 17-20, 1985 թ. Տիբորյոյի Սք. Յովհաննէս Եկեղեցու Գեղարուես-տի Ծանձնախմբի կազմակերպած ցուցահանդեսը, անցաւ անճախաղէկ յաջողու-թեամբ: Վաճառքի ներկայացումը գործերից զնուել են 24 աշխատանքներ, որից 7-ը գլուխգործոցներ՝ սեփականությունը դարձան նույն եկեղեցու կից կառուցուող ազգային թանգարանին, Տիբոր Այլը Մանուկեանի նուիրատուությամբ:

Լոս Անջելեսում Նոյեմբեր 12-16, 1985 թուականներին Heritage Gallery-ի մէջ կայանալիք ցուցահանդեսը էլ, կը յուսանք նույն խանդավառութեան ու յաջողութեան պիտի արժանանայ, ոչ միայն վաճառքի, այլեւ մշակութային իսկական տօնի իմաս-տով:

Ռուտով Խաչատրեան ծնած է 1937-ին Երեւանի մէջ, ան իր մանկա-կան տարիքին սկսած է նկարել եւ տասներեք տարեկանին ի վեր մասնակ-ցած է բազմաթիւ ցուցահանդէսներու, Հայաստանին մէջ ըլլալ թէ միու-թեանկան մակարդակին վրայ:

Ռուտովի կեանքը ամբողջական չըլլալարձ մը կրած է իր տասներեք տարեկանին, երբ հանդիպած է հայրենի նկարիչ եւ քանդակագործ Նրուանդ Քոչարին: Նրուանդ Քոչար անջնջելի ազդեցութիւն թողած է երիտասարդ արուեստագէտի զարգացման եւ արուեստի աշխարհայեացքին վրայ: Քո-չարն է, որ երիտասարդ արուեստագէտը ծանօթացուցած է Լեոնարդո Տա-վինչիի եւ Ալբրեխտ Դյուրերի նկարչական աշխարհներուն: Եւ երբ առաջին անգամ տեսած է Ռ. Խաչատրեանի գործերը Նրուանդ Քոչար բացազանշած է «կարծես թէ վերածնած է Լեոնարդոյի ոգին»:

Պաշտօնական գործերը ցուցադրուած են աշխարհի տարբեր երկրորե-րու մէջ եւ արժանացած են բազմաթիւ մրցանակներու: Անոր գործերը ներկայացուած են Գերմանիոյ, Ֆրանսայի, Չեքոսլովաքիայի, Պոլսի, Իտալիոյ եւ Անգլիոյ մէջ: 1960-ին Ռ. Խաչատրեան ընտրուած է Ս.Ս.Հ.Մ.-ի նկարիչներու միութեան անդամ, 1969-ին ան շահած է ստալին մրցանա-կը Կոմիտասի հարիւր ամեակին առթիւ կազմակերպուած նկարչական մրցանակին:


1971 թուականին ի վեր Ռ. Խաչատրեան կը գործէ ու կ'ապրի Մոսկուա-յի մէջ: 1978-ին ան իր առաջին անհատական ցուցահանդէսը տուած է Մոս-կուայի մէջ, իսկ 1979-ին ցուցահանդէսներ տուած է Լենինկրատի եւ Օտե-սայի մէջ: 1980 թուականին եւ 1983-ին անհատական ցուցահանդէսներ տուած է Երեւանի մէջ, իսկ իր երկրորդ անհատական ցուցահանդէսը Մոսկուայի մէջ կայացած է 1984-ին, (երկար տարիներու նորոգումէն յետոյ Պաշտօնական տաղիւնն էր, որ բայցաւ Արեւելեան ժողովուրդների պետա-կան թանգարանը) եւ միեւնոյն տարին է որ նկարիչ Ռուտով Պաշտօնական արժանացած է Հայաստանի ժողովրդական նկարչի պատուաւոր տիտղոսին: Ռուտովի Պաշտօնական ներկայիս կը գտնուի Ամերիկա՝ Տիբորյոյի եւ Լոս Անջելեսի մէջ ներկայ գտնուելու իր անհատական ցուցահանդէսներուն: Ան առաջին անգամն է, որ կը գտնուի Ամերիկա եւ հիւրն է «Էրեբունի» Հրատարակչութեան:

Ստորեւ հարցազրույցը.—

—Պարոն Խաչատրեան, մենք կ'ազնեմ մեր հարցազրույցը սկսիմք ձեր նկարչական կազմաւորման մասին կարգ մը տեղեկութիւններ բաղնով: Ի՞նչ ու՞ր ուսած էք, ի՞նչ է ձեր պատրաստութիւնը եւ ի՞նչ եղած է Նրուանդ Քոչարի դերը ձեր արուեստի զարգացման մէջ:

—Ինձ թուում է, որ սովորաբար պատահականութիւններ չեն լինում, կան օրինաւորութիւններ: Տասներեք-տասներորդ տարեկան հասակում եւ սովորեցի Երեւանի նկարչական ուսումնարանում: Յետոյ եւ դուրս եկալ այդ ուսումնարանից եւ պատահմամբ հանդիպեցի Նրուանդ Քոչարին, որին բոլորը մանասքո էին կանչում: Նա մի հազուադիւր երեւոյթ էր Հայաստանի եւ ընդհանրապէս արուեստի պատմիչներին, արուեստի մասին մտածողնե-րին: չըբանակումէ՞Քոչարը երկար տարիներ ապրել է Փարիզում, ճաշակել էր ամբողջ համաշխարհային մշակոյթը, խորապէս ըմբռնել, եւ ժամանա-կակից արուեստի պատմութեան մէջ ստեղծել էր նոր ուղղութիւններ, Քրանսնե-րէն կ'ասեն զրեթիւր տան լիսարա: Հիմնադիրն էր այդ ուղղութիւնը:

Երեւանում կ'էր տարեկան հասակում Փարիզից երիտասարդ մանասքոն վերադառնում է Հայաստան, շարունակելու իր արուեստը հայրենի հողի վրայ: Բոլորին յայտնի է Սասունցի Դաւիթի հոյակապ կոթողը, որ զարդա-րում է մեր Երեւանի կայաքանի հրապարակը: Քոչարը քայլող հանրազի-տարան էր, ամէն ինչից տեղեկ է եւ փիլիսոփայութիւն եւ զրեթիւնութե-թիւն: Տասներեքից տարեկան հասակից մինչեւ երեսներեք տարեկան հասակը զրեթէ ամէն օր մենք հանգիպել ենք, զրուցել, միշտ ցոյց եմ տուել իմ նկարներս: Ամէն օր նոր աշխատանք կը տանէի Քոչարին ցոյց տալու, կամ եւ կ'երթայի իրեն մօտ կամ ինքը կու գար ինձ մօտ: Այդ շփումն է, որ ինձ տուեց այս մեծ սէրն ու մղումը արուեստի բնագաւառում: Եփում որ շատ կարեւոր է արուեստագէտի համար:



«ՄԱՆՈՂ ԵՒ ԱՌՈՒՄ», 1980

Նկարչութիւնը իմ կարծիքով չեն սովորեցներ, այլ պէտք է վարակել նկարչական արուեստի սիրով վարակել աշխատասիրութեամբ, հասկանալ ռուն նպատակը արուեստի, իսկ ամենավերջերս արուեստագէտների շփումն է մեծ արուեստագէտների հետ:

—Ուրեմն ակադեմիական մասնաւոր պատրաստութիւն չստացա՞ք:

—Ո՛ր, դա արդէն ինձ պէտք չէր, որովհետեւ տասներեք տարեկան հասակում, թոյլ տուէր սակ, եւ պատրաստ էի, այդ ճանապարհներն ան-ցած էի ինքնուրոյն կերպով:

—Ուրեմն հիմնականին մէջ Քոչարի եւ միւս մեծ արուեստագէտներու հետ ձեր ունեցած շփումներու շնորհիւ է որ կարողացա՞ք ձեր նկարչական անհատականութիւնը կազմաւորել:

—Այո՛, որովհետեւ անհատականութիւն կազմաւորելը միշտ նկարելու մէջ չէ, այլ պէտք է անպայման հասկանալ նկարչական արուեստի ամբողջ պատմութիւնը, ժամանակակից արուեստը, ինչ որ անհրաժեշտ պայման է ամէն արուեստագէտի համար, անկախ այն բանից թէ սուկայ արուեստա-գէտը արդիական արուեստի հետեւող է, թէ դասական, անհրաժեշտ է, որ ամէն ինչից տեղեկ լինի: Սրանից յետոյ, արուեստագէտն ինչ որ ունի ներսում, տաղանդի ու չնորհի սովորութեան զէպրում իր խօսքն անպայ-ման կ'ստի:

—Կ'ուզէի ձեզի հարցում մը ուղղել Հայաստանի նկարիչների մասին: Քանի՞ նկարիչներ կան այսօր Հայաստանի մէջ, ի՞նչ պայմաններ կը հետե-լին, ո՞րքանով հաղորդակից են աշխարհի նկարչական շարժումներուն, որո՞նք են այդ նկարիչներուն մէջ ամենէն շնորհալիներն ու նամայում-ները:

—Հայաստանում այսօր մօտ ութը հարիւր (800) նկարիչ կայ professional: Սա բաւականին շատ է Հայաստանի համար: Կան նաեւ ոչ professional-ներ, թիւով բաւականին շատ: Ընդհանրապէս հայ ժողովուրդը շատ մեծ դեր է ունեցել եւ կ'ունենայ մշակոյթի ասպարէզում: Կան շատ տաղանդաւոր նկա-րիչներ, երիտասարդ արուեստագէտներ, ճանաչում են համաշխարհային նկարչութեան անցեալն ու ներկան: Տեղեկութիւն միշտ կայ Հայաստանում եւ ամէն ինչ զրեթէ գիտեն հայ արուեստագէտները, քանի որ քսաներորդ դարը այնպիսի դար է որ ամէն մի կատարուած նորութիւն տեղ է հասնում: Արուեստի մասին ամապարի կը տպուեն, այնպէս որ ամէն ինչից տեղեկ են: Բայց իհարկէ իմանալը միայն կարեւոր չէ, այլեւ շփումը:

Տաղանդաւոր արուեստագէտներն շատ կը սիրեն ու կը հաւնին Ռուտին Արալեանին, Մարտին Պետրոսեանին, Էլիբեկեան եղբայրներին: Ենորհայի քանդակագործներ շատ կան, ինչպէս Արա Շիրազը, Օհան Պետրոսեանը եւ շատ ու շատ ուրիշներ: Սրանք իմ սիրածներն են, իմ բնկերները, որոնց յաճախ կը հանդիպեմ, կը վիճենք, կը խօսենք: Պէտք է նշանել անհատական ցուցահանդէսներն էլ լինեն եւ Ամերիկայում եւ ուրիշ երկրներում: Իրար նման չեն մեր նկարիչները, ամէն մէկն ունի իր անհատականու-թիւնն ու սեփական խօսքը:

—Լաւ, ընդհանրապէս ասումք ի՞նչ ուղղութիւններու կը հետեւին, հա-մաշխարհային շարժումներուն հայտնող են, ազդուած են այդ շարժում-ներուն, թէ բոլորովին մար շարժում մը սկսած են իւրաքայտուկ, որ Հայաս-տանի յատուկ է, կամ իրենց իւրաքայտուկ է:

—Այսպէս ասեմք, Ռ. Արալեանը զրեթէ բոլոր ուղղութիւններով էլ նկարած է, զործածած է իր արուեստի մէջ, սկսած ումանտիզմից մինչեւ վերացական, ժամանակակից արուեստի ձեւերը, մինչեւ «Փոփարթ» բայց (Շար. էջ 6)

հայ կեանք

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Մարթա Պուտաքեան կը ծանօթանայ կուսակցական քաղաքականութեան գերբն ծալքերուն

Մարթա Պուտաքեանի այս ամառուան ընթացքին Տեմոկրատ Կուսակցութեան Ազգային Յանձնախումբի մօտ ունեցած վարժողական փորձառութեան զաղաթնակէտը հանդիսացաւ Տեմոկրատական Տնտեսական Որոշուողի եռամսեայ խորհրդակցողութիւններէ կազմուելու առիթը, Վերսիլիայի կրօնաբանական ամառանոցին մէջ: Մարթը, որ մասնակցեցինքնին մէկն էր Հայկական Համադուարի Ամառնային Վարժողական Յայտագրին, մասնակցեցաւ այս փոքրիկ կազմակերպական աշխատանքներուն: Որոշուողականութիւնը կը մասնակցեցին Տեմոկրատ Կուսակցութեան մեծամարտար ներկայացուցիչներին կատարողները:

Վերսիլիայի ինքնուրուագի կը բաղկանայ ամերիկացի մարզի այն անհատներէն, որոնք ամառուան 10,000 տղայի նախադասութիւն կատարած են Տեմոկրատ Կուսակցութեան: Այդպիսի անհատներ հրաւիր կը ստանան ներկայ գտնուելու Տնտեսական Որոշուողի եռամսեայ ժողովներուն: Այս ժողովներու նպատակն է առիթ ընծայել ներկայացուցիչներին, ընկերու Տեմոկրատ Կուսակցութեան ծրագրերը եւ որոշումները: Հարցերը:

Օգոստոսի ժողովին ներկայ էին աւելի քան 50 անդամներ, որոնք առիթը ունեցան հանդիպելու Տեմոկրատ պաշտօնական անձնաւորութեան:

Մարթա ներկայ գտնուեցաւ աշխատանքներին մի քանիին: Տեղի ունեցած զանազան ընդունելութեան ընթացքին, ան առիթը ունեցաւ ծանօթանալու եւ խօսակցելու Տեմոկրատ Կուսակցութեան ղեկավար ղեմերու հետ: Իրեն Պարնար Գոլֆէր քաղաքական գիտութիւններու ճիւղի ուսանողուհի, Մարթա մեծապէս գնահատեց այս առիթը՝ կուսակցական քաղաքականութեան, մասնաւորապէս մասնաւոր թափանցիկ, մօտէն ծանօթանալու: Իր իսկ խօսքերով՝ «Եթէ է թիւր այն ուսանողներուն, որոնք առիթը կ'ունենան հարցերը «վարձողութիւն հոսեւէն» տեսնելու»:

Հայկական Համադուարի վարժողական Յայտագիրը ուսանողներ կը գտնուէ Ուաշինկթընի զանազան դրասենեակներուն մէջ: Հետաքրքրուող ուսանողներ պարտին կապ պահել վարժողական Յայտագրի վարիչ Օր. Ալին Գալպեանի հետ, ստանալու համար դիմումագրի ծրարը:

Հայ գիրքի շքեղ ցուցահանդէս մը Մարտէլի մէջ

Հոկտեմբեր 4ին, Մարտիլիոյ Միւզիք տը Մարտիլի մէջ տեղի ունեցաւ պաշտօնական բացումը Հայ գիրքի ցուցահանդէսին շուրջ 500 անձերու եւ տեղական իշխանութիւններու ներկայութեան: Հոն էին նաեւ Հայաստանի Երաժիշտներու Միութեան նախագահ Եղորտը Միլիթիան եւ երգահան Արեւստանը Յարութիւն: Գաղափարներ ներկայացուցած էր իր կցորդը՝ Ժան Վիքթոր Բարտոնիէ, որ գիրքերու եւ ձեռագիրներուն պատճառով յուզուած էր գիրքի զեղեկութեան մէջ տեսաւ Հայ ժողովուրդի վեհաճանութիւնը, հակառակ դժբախտ ճակատագրի մը, եւ յանուն Մարտէլի քաղաքի յայտնեց իր գնահատանքի եւ շնորհակալական խօսքերը:

Միշէլ Փրէճ՝ Շրջանային Որոշուողի նախագահը, յայտնեց իր հիացումը ի տես ցուցադրուած Հնագոյն եւ վաւերական փաստաթուղթերուն, որոնք մաս կը կազմեն ժողովուրդի մը հաւաքական իշխողութեան: Ըստ թէ այն բացառիկ ցուցահանդէսը պէտք է չլքել ու հպարտ ենք որ նման բարձրորակ իրադրութեամբ կը սկսի Միջերկրականի այս ամիսը, որուն քաղաքակրթութեան:

Նախապէս կարգադրուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Վազգէն Ա.ի կողմէ, յատկապէս ուղղուած Ս. Էմիլիանէն, հայերէն եւ ֆրանսերէն թարգմանութեամբ: Մշակույթի Տան անունով Կարօ Յովսէփեանի ներկայացուց ցուցահանդէսին ընդունել, յատկանշելներն ու նպատակը:

Հ. Ներսէս Վրդ. Տէր-Ներսէսեան բերաւ Միսիթարեան Միաբանութեան խօսքը, ընդգծելով զարեւու ընթացքին կապերը՝ երկու մշակույթներու մերձեցում:

Յուշահանդէսը արտակարգ հետաքրքրութիւն կը ստեղծէ ընդ շրջանակներէ ներս: Տեղական մամուլը, անխոր, յաջորդական լայն տիւնակներ կը յատկացնէ, ինչպէս նաեւ հեռատեսիլի տեղական կայանը որ արձագանգեց ցուցահանդէսին: Արդարեւ, փայլուն սկիզբ մը՝ փայլուն ցուցահանդէսի մը համար, որ պատիւ կը բերէ Հայ գիրքին: Կազմակերպուած է նաեւ զատառուութիւններու շարք մը, որուն առաջինը տեղի ունեցաւ Երաթի, Հոկտեմբեր 5ին: Դասախօսներն էին Փրոֆէսէօր Ս. Սալվիանի (Հոմէրոս) եւ Հ. Ներսէս Տէր-Ներսէսեան:

ԵՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Մեր շատ սիրելի հոր՝ Գեորգ Անթիպեանի, 1985-ին, Հ.Բ.Ը. Միութեան Հայկի մասնաճիւղէն վերերան անդամի վկայագիր ստանալուն ուրախ առիթ, ջերմապէս կը շնորհակալուիմք զինք, մարդկային արեւշատութիւն եւ քաջանորոգութիւն:

Այս ուրախ առիթով 30 տուար կը նուիրեմք «Նոր Օր»ին:

Ջաւակներ՝

ՅՈՒՐԻԿ, ՍԱՐԳՍԻ ԵՎ ԱՐՏՅՈՒ ԱՆԹԻՊԵԱՆԵՐ

Մեսրոպ Մաշտոցի Գնորում հանդէս՝ Միսիթարեան վարժարանի մէջ

Հոկտեմբեր ամիսը Միսիթարեան վարժարանի մէջ յայտարարուած էր Մշակույթի ամիս: Ընդհանուր խանդավառութիւն եւ հետաքրքրութիւն մը կը նկատուէր աշակերտութեան մէջ: Հայագիտական բաժնի ուսուցիչները ուշի ուշով կը հետեւէին աշակերտներու արտասանութեան մակարդակի բարելաւմին, բովանդակային պատի թերթերու լոյս ընծայումին, ազգային պատմութեան նիւթերու ընկալումին: Դասերու ընթացքին ազգային մշակույթի, դիրքի ու գրականութեան նկատմամբ սեր ու հետաքրքրութիւն առաջացնելու արտակարգ մօտեցումներ, փոքրիկներու սրտերուն մէջ վառած էր մաշտոցեան կրակը:

Աստի ինչու, Հոկտեմբեր 25-ին, Միսիթարեան վարժարանի նախակրթարանի աշակերտութիւնը մեծ հանդիսաւորութեամբ եւ երկրաշօթէն հաւաքուած էին վարժարանի սրահ, իրենց յարգանքի ու երախտագիտութեան տուրքը մատուցանելու հայ ժողովուրդի մեծանուն փրկիչ, սուրբերու մէջ սուրբ, հայ գիրքերու գիտարար՝ Մեսրոպ Մաշտոցին:

Թարգմանչաց Տօնի հանդիսութեան սկսուա նախակրթարանի 2-կարգի աշակերտներ՝ Յամարիկ Կարպիտեանի եւ Ռազմիկ Շահինլը-եանի ողջոյնի խօսքով, որմէ ետք, նախակրթարանի աշակերտութիւնը, կարգ առ կարգ, ներկայացուցին մաքուր ու արտայայտիչ արտասանութիւն (ուսուցիչներ՝ Ա. Շահմալիբեան, Զ. Ետայեան, Ա. Լիպարեան, Ս. Յակոբեան): Ընտրուած արտասանական կտորները նուիրուած էին հայ մշակույթին ու զարթոթեան: Սրահի բար լուսեան մէջ կը հնչէր Մեսրոպ Մաշտոցի գովքը, մեր հրաշագործ աշուրներին ու հիասքանչ հայերէնի փառաբանումը:

45 վայրկեան տեւող այս հանդէսը ձգեց մեծ տպաւորութիւն ու, վստահարար, ներկայներու սրտերուն մէջ եւս խորացաւ ու բորբոքեցաւ հայու արիւնը, անտէք եւս, աշակերտներու հետ, հպարտութիւն զգացին, որ հայ են, եւ, փոքրիկ նիւթերսին հետ, անտէք ալ երգուեցան օտար ամիսը մէջ միշտ հայ ըլլալ:

Այնուհետեւ, վարժարանի երգչախումբը (ղեկավար՝ Մ. Անաս-

եան), խանդավառութեամբ ու յաղորդութեամբ ներկայացուց «Եթէ Հայ ես», «Ով մեծաբան», «Հայորդի» եւ «Ազգ փառապան» երգերը:

Պահի հանդիսաւորութիւնն ու ազգեցութիւնը մեծ էին:

Պատու վարժարանի փոխ տնօրէն Հայր Տաճատ Վրդ. Եարտըմեան: Ան յայտնեց իր ուրախութիւնն ու զոհուածութիւնը, որ աշակերտները այսքան կ'ունենան իրենց կրօնը, կրօն ժամանակի մէջ կրօնը են յաջող ծրագիր մը ներկայացնել: Հայր Տաճատ, ղեկավար աշակերտներուն ըսաւ, որ անտէք գիտակցեցեալ է ըլլաւ, թէ ինչ ըսին ու ինչ խոստացան, միշտ պէտք է պահեն ազգային մեր պատիւը, քանի որ մենք չենք կրնար բաղդատուիլ ուրիշ ժողովուրդներու հետ, մենք ունինք մեր արժէքները եւ գանոնք պէտք է պահէ՛ք արթութեամբ...:

Յաջող, եւ կարգի մը հայութիւն աւելցնող հանդէս մըն էր...:

ՄԻՍԻԹԱՐԱՆ ՎԱՋԱՐԵ ԵՎ ԳՈՐԵԱՆ

Առաջին Անգամ
Միացեալ Նահանգներու Մէջ
ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ



ԴՈՒՏՈՒՅ
ԽԱՅՏՏՐԵԱՆ
(ՀԱՄԱՅՈՒՄԱՆ ԳԼԿԱՐԻՅ)

Նոյեմբեր 12-18, 1985
HERITAGE GALLERY
718 North La Cienega Blvd., Los Angeles
Յանկալ փառաբանութիւններ, հաւաք զինք!
EDITIONS (213) 465-6168
EREBOUNI 5825 Sunset Blvd., #203

ՆՈՐ ՕՐ
Ար հրատարակուի
Երեքշաբթի եւ Կիրակի օրեր

ԽՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱՅԻՆՆԵԱՆ, Նոյսպար
ՇԱՆՈՅՆԵԱՆ, Խաչիկ
ՍԵՐԵՐԵՆԵԱՆ, Վաչէ
ՏԵՂԵՆԵԱՆ, Ասատուր

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ

ԱՀԱՐՈՒՆԵԱՆ, Փայլակ

ՀԵՆՈՒՅԱՆԵՐ

Խմբագրութիւն (213) 933-3298
Վարչութիւն (213) 933-8248

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆԵՐ

ՄԻԱՅԵԱՆ ԱՆՆԱԿԱՆԵՐ
Արեւմտեան Շրջան.....\$30.00
Արեւելեան Շրջան.....\$40.00
ՔԱՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ.....\$40.00

NOR OR SEMI WEEKLY
(ISSN 0029. USPS 391-380)

Is published every Tuesday & Friday
(except holidays & 2 weeks in July) by
ARMENIAN DEMOCRATIC LIBERAL
ORGANIZATION

Second-class postage paid at
LOS ANGELES, CA.

POSTMASTER: Please send address changes to:
NOR OR
7466 Beverly Boulevard, Suite 201
Los Angeles, California 90036

TELEPHONES:
Editor (213) 933-3298
Management (213) 933-8248

YEARLY SUBSCRIPTIONS
United States - West Coast. \$30.00
East Coast. \$40.00
Canada & Mexico. \$50.00

OVERSEAS
Air Mail. \$100.00

ՄԱՐՏԱԿԱՆ
Պարզ թղթատարով.....\$50.00
Օդային թղթատարով.....\$90.00